Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի աշխատանքային շրջանակներ

Այս բաժնում նկարագրվում են աշխատանքային շրջանակները՝ սկզբունքները, ընթացակարգերը, չափանիշները, դրամաշնորհի հայտերի մեխանիզմները, ինչպես նաև Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի ընդհանուր կառավարման գործընթացը: Ծրագրի հաջող իրականացման համար էական նշանակություն ունի նրա ընդհանուր թափանցիկությունը և շահագրգիռ կողմերի շրջանում վարչարարության հստակ պատկերացումը:

1. Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի իրականացման սկզբունքներ

Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ն Ազգային ծրագրի իրականացման համար սահմանում է մի շարք սկզբունքներ, որոնք հիմնված են ԳԷՀ-ի գլոբալ սկզբունքների վրա և միևնույն ժամանակ հաշվի են առնում տեղական առանձնահատկությունները:

- ՓԴԾ հայաստանյան ծրագրի կողմից ֆինանսավորվող նախագծերը պետք է աջակցեն համայնքային նախաձեռնություններին և ԳԷՀ-ի կիզակետային ոլորտներում ապահովեն գլոբալ բնապահպանական օգուտները, միևնույն ժամանակ նպաստելով աղքատության կրճատմանը և տեղական բնակչության դերի բարձրացմանը:
- Հայաստանում ՓԴԾ-ի դրամաշնորհների համար իրավասու են դիմելու միայն գրանցված ազգային ՀԿ-ները[1], որոնք չունեն օտարերկրյա հիմնադիրներ:
- Ծրագրի շահառուները պետք է մեծապես ընդգրկված լինեն նախագծի ցիկլի բոլոր փուլերում, այդ թվում մշակման, իրականացման և մոնիթորինգի: Սա կնպաստի նախագծի համայնքային «պատկանելիությանը»:
- Հաջողված նախագծերը պետք է խնդրի հետևանքների փոխարեն կենտրոնանան նրա պատճառների հասցեագրման վրա:
- Առավելություն է տրվում այն նախագծերին, որոնց ցուցաբերում են նորարարական մոտեցումներ և գործելակերպ:
- Նախագծի կայունությունն ու շարունակականությունը նրա ընդունելիության չափանիշներից մեկն է: Նախագծերը պետք է ապացուցեն շարունակականությունը՝ դրական ազդեցությունը շարունակվելու է նախագծի իրականացման ավարտից հետո: Հայտատուն պետք է մանրամասն բացատրի թե ինչպես է ապահովվելու նախագծի շարունակականությունը՝ ԳԷՀ-ի ՓԴԾ-ի ֆինանսավորման դադարեցումից հետո:
- Նախագծի իրականացումը ենթարկվելու է լուրջ մոնիթորինգի, որպեսզի ապահովվի ԳԷՀ-ի ՓԴԾ-ի գումարների նպատակային օգտագործումը և համապատասխանությունը Ազգային ծրագրի ռազմավարությանը:

---

[1] ՀՀ ազգային օրենսդրության մեջ օգտագործվող «հասարակական կազմակերպություն» տերմինը նույնական է ընդունված և կիրառվող «ոչ կառավարական կազմակերպություն» հասկացությանը: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը իրավական հիմք է ստեղծում հասարակական կազմակերպությունների հիմնադրման համար: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի Հոդված 3 կետ 1 սահմանում է հասարակական կազմակերպության իրավական կարգավիճակը:

- Թափանցիկությունը ԳԷՀ-ի ՓԴԾ-ի բոլոր գործողությունների հանգուցային հասկացություններից է: Շահագրգիռ կողմերը տեղեկացվելու են Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի առաջընթացի, նախագծերի իրավիճակի, լուրերի և այլ համապատասխան տեղեկությունների մասին ՓԴԾ ազգային ծրագրի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի վեբ կայքերի՝ www.sgp.am և www.am.undp.org միջոցով, ինչպես նաև ըստ անհրաժեշտության էլեկտրոնային այլ ցանցերով և միջոցներով:
- Նախագծի տևողությունը սովորաբար չպետք է լինի 24 ամսից ավելի:
- Դրամաշնորհի առավելագույն գումարը պետք կազմի է 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:
- Նախագծերը պետք է ապահովեն 1:1 համաֆինանսավորման հարաբերակցություն՝ հավասարաչափ բաշխված գումարային և ոչ գումարային (աշխատանք, սարքավորումների օգտագործում, նյութեր և այլն) ներդրումների: ԳԷՀ-ի ՓԴԾ-ն նախագծին չի հատկացնում հիմնական ֆինանսավորում՝ Ծրագրի կողմից հատկացվող որևէ դրամաշնորհի բնույթը պետք է լինի հավելյալ, լրացուցիչ:

2. Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի իրականացման ընթացակարգեր

Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ն սահմանում է մի շարք ընթացակարգեր, որոնք առանց բացառության պետք է կիրառվեն նախագծի ցիկլի յուրաքանչյուր փուլում:

Ծրագրի մշակման փուլ

- Նախագծի մշակման փուլն սկսվում է ՓԴԾ հայաստանյան ծրագրի մրցույթի պաշտոնական հայտարարման պահից: Հայտարարությունը լայնորեն տարածվելու է էլեկտրոնային ցանցերի միջոցով, հրապարակվելու է ՓԴԾ ազգային ծրագրի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի վեբ կայքերում (www.sgp.am և www.am.undp.org) և այլ միջոցներով:
- Նախագծերը պետք է հստակորեն ցույց տան, որ տեղական համայնքները ներգրավված են նախագծի մշակման փուլում: Նախագծի մշակման ընթացքում, հայտատուն պետք է ապահովի նրա համապատասխանությունը երկու հիմնական ընտրության չափանիշներին՝ նախագիծը հասցեագրվում է Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի թեմատիկ ոլորտներից առնվազն մեկին, կամ մեծապես նպաստում է ՓԴԾ ԳՓ-6 մեկ կամ ավելի ռազմավարական առաջնայնություններին (տես՝ ԱԾՌ բաժին 4) և համահունչ է Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի իրականացման վերը նշված սկզբունքներին:
- Նախագծի մշակման փուլում, հայտատուն կարող է օգտվել Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի թիմի խորհրդատվությունից, որը տրամադրելու է տեղեկատվական անհրաժեշտ աջակցություն մրցունակ և բարձրորակ հայտ մշակելու համար:
- Որոշ դեպքերում, նախագծի առաջարկի պատշաճ մշակման համար հայտատուն կարող է նաև ներկայացնել ֆինանսական աջակցություն կամ նախագծի նախապատրաստման դրամաշնորհ ստանալու հայտ: Այդ դեպքում հնարավոր է ներգրավել արտաքին փորձագետներ՝ հատուկ ուսումնասիրությունների, տեխնիկական նախագծի մշակման, համայնքի կամ այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվություն անցկացնելու նպատակով: Ֆինանսական աջակցությունը, սակայն, սահմանափակ է և չի կարող գերազանցել 5,000 ԱՄՆ դոլարի սահմանը՝ կախված նախագծի մեծությունից և առանձնահատկություններից: Նախագծի նախապատրաստման դրամաշնորհի համար համաֆինանսավորումն անհրաժեշտ չէ, սակայն այն համարվում է պլանավորվող լիարժեք նախագծի բաղկացուցիչ մաս: Սահմանափակ է նաև նախագծի պատրաստման դրամաշնորհի տևողությունը, այն չի կարող գերազանցել 3 ամիսը: Նախագծի պատրաստման դրամաշնորհի հաստատումը ԱՂԿ-ի կողմից չի երաշխավորում հետագայում լիարժեք նախագծի առաջարկի հաստատումը:

- Հայտատուն պետք է օգտագործի ՓԴԾ դրամաշնորհային հայտի ձևաթերթիկը: Այլ ձևաչափերով ներկայացված հայտերը չեն ընդունվում:
- Վարձատրության և այլ վարչական ծախսերը պետք է լինեն իրատեսական, հիմնավորված և ողջամիտ՝ կապված նախագծի առանձնահատկությունների հետ: Գերագնահատված վարչական ծախսերը կարող են հայտի մերժման պատճառ հանդիսանալ:
- Ոչ գումարային ներդրումները հաշվարկելիս, հայտատուն պետք է հաշվի առնի իրական ընթացիկ գները և համաձայնեցնել ՓԴԾ ազգային թիմի հետ[2]: Գերագնահատված ծախսերի հայտնաբերումը կարող է հայտի մերժման պատճառ հանդիսանալ:
- Հայտերը առկա են հայերեն և անգլերեն լեզուներով:

Նախագծի ներկայացման փուլ

- Հայտերը ներկայացվում են միայն գրանցված ՀԿ-ների և համայնքա կազմակերպությունների կողմից: Եթե նախագծի գաղափարն առաջադրվում է մարդկաց խմբի կողմից, նախաձեռնող խումբը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, պետք է գրանցվի որպես հասարակական կազմակերպություն:
- Նախագծերի հայտերը պետք է ավարտուն տեսքով և կից ուղեկցող նամակով ներկայացվեն Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի Ազգային համակարգողին: Հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ Ազգային համակարգողի էլեկտրոնային փոստի հասցեով (hovhannes.ghazaryan@undp.org), կամ տպագրված տարբերակով ՄԱԿ-ի Գարասենյակի անվտանգության աշխատակիցներին (Պ. Ադամյան 14)՝ ՓԴԾ Ազգային համակարգող՝ Հովհաննես Ղազարյան անունով:
- ԱՀ-ն կատարում է ստացված դրամաշնորհային հայտերի հետ նախնական դիտարկում և հայտատուներին տեղեկացնում ՓԴԾ-ի պահանջներին դրանց համապատասխանության կամ անհամապատասխանության մասին:
- ՓԴԾ-ի պահանջներին նախագծի տեխնիկական փոքր անհամապատասխանությունների դեպքում, հայտատուին առաջարկվում է ԱՀ-ի առաջարկությունների հիման վրա փոփոխել հայտը:
- ՓԴԾ-ի պահանջներին նախագծի համապատասխանության դեպքում, այն ներկայացվում է ԱՂԿ-ի քննարկմանը:

Նախագծի ուսումնասիրման փուլ

- ԱՂԿ-ն նախապես ընտրված նախագծերի առաջարկները ծանոթացման_համար ստանում է համապատասխան նիստից երկու շաբաթ առաջ: ԱՂԿ-ն պարբերական նիստեր է գումարում՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում, ԱՂԿ-ն կարող է գումարել նաև արտահերթ նիստեր:
- ԱՂԿ-ն գնահատում է առաջարկները և լրացնում է գնահատման ստանդարտ ձևաթերթիկը յուրաքանչյուր հայտի համար և կայացնում է ստորև բերված մեկը՝ հաստատում, մերժում կամ վերաձևակերպում:
- Որոշումն ընդունվում է ԱՂԿ անդամների կարծիքների կոնսենսուսի հիման վրա, կամ, որոշ դեպքերում, քվեարկությամբ:

[2] Ոչ գումարային ներդրումների հաշվարկի շրջանակը կտրամադրվի ՓԴԾ հայաստանյան գրասենյակի կողմից

- ԱՀ-ն յուրաքանչյուր հայտատուին գրավոր տեղեկացնում է ԱՂԿ համապատասխան որոշման մասին:

Նախագծի իրականացման փուլ

- Նախագծի իրականացումն սկիզբ է առնում դրամաշնորհառուի և UNOPS-ը ներկայացնող ՄԱԶԾ-ի միջև Փոխըմբռնման հուշագրի (ՓՀ) ստորագրությամբ:
- Վճարումների ժամանակացույցը մանրամասնվում է նախագծի ֆինանսավորման ՓՀ-ում: Որպես կանոն, վճարումների սխեման հետևյալն է.
  - ✓ 50% - ՄԱԶԾ-ի և հայտատուի միջև ՓՀ-ի ստորագրումից անմիջապես հետո,
  - ✓ 40% - ԱՀ-ի կողմից առաջին միջանկյալ հաշվետվության հաստատումից հետո,
  - ✓ 10% - ԱՀ-ի կողմից ավարտական հաշվետվության հաստատումից հետո:
- Ծրագրի կարևոր բաղադրիչներից է նախագծի մոնիթորինգն ու գնահատումը իրականացման բոլոր փուլերում, որն իրականացվելու է ԱՀ-ի և/կամ ԱՂԿ-ի անդամների կողմից (տես ԱԾՌ-ի Բաժին 6):
- Եթե նախագծի իրականացումը չի համապատասխանում նախագծի հաստատված հայտին կամ ԱՀ-ի կողմից հայտնաբերվում է ՓԴԾ-ի գումարների որևէ այլ չարաշահում, ապա ԱՂԿ-ն կարող է որոշում կայացնել դրամաշնորհային նախագծի ՓՀ-ի դադարեցման մասին: Լուրջ խախտումների և չարաշահումների դեպքում, դրամաշնորհառուն կարող է ենթարկվել իրավական պատասխանատվության:

Նախագծի ավարտական փուլ

Նախագծի ավարտից հետո, դրամաշնորհառուն, ԱՀ-ի հետ միասին, պատրաստում է նախագծի ավարտական հաշվետվություն: Այն պետք է ներառի նախագծի բոլոր արդյունքները, քաղված դասերը, մարտահրավերները, ձեռք բերված գիտելիքները, օգուտները, կրկնօրինակման հնարավորությունները և այլն: Այդ տեղեկությունները կարող են օգտակար գրականություն հանդիսանալ Հայաստանում ապագա հայտատուների և այլ շահագրգիռ կողմերի համար: Հաշվետվությունը ներկայացվելու է նաև ԱՂԿ-ին:

3. Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի ինստիտուցիոնալ շրջանակներ

Հայաստանում ԳԷՀ-ի ՓԴԾ-ի ինստիտուցիոնալ շրջանակները նկարագրված են ստորև:

Ազգային Համակարգողն առաջատար դերակատարում ունի Ազգային ծրագրի իրականացման կառավարման գործում: ԱՀ-ի կողմից իրականացվող հիմնական գործառույթներն են՝ շահագրգիռ կողմերի շրջանում ԳԷՀ/ՓԴԾ-ի նպատակների և ընթացակարգերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, առաջարկների ձևակերպման գործում ՀԿ-ներին և համայնքային կազմակերպություններին աջակցություն, նախագծերի առաջարկների նախնական դիտարկում, աջակցություն Ազգային ղեկավար կոմիտեի աշխատանքներին, աջակցություն ՀԿ-ներին և համայնքային կազմակերպություններին տեխնիկական աջակցության ծառայություններից օգտվելու հարցում, ծրագրի պատշաճ մոնիթորինգի և գնահատման ապահովում, ծրագրի շարունակականության համար հիմքերի ձևավորում:

Ազգային Ղեկավար Կոմիտեն ՓԴԾ-ի կենտրոնական միավորն է և բաղկացած է կամավոր անդամներից, որոնք ներկայացնում են ՀԿ սեկտորը, կառավարությունը, կրթական, գիտական հաստատությունները, դոնոր կազմակերպությունները և ՄԱԶԾ-ն, որտեղ գերակշռում են ոչ

կառավարական սեկտորը ներկայացնող անձինք: Կոմիտեն ընդհանուր կերպով ուղղորդում է Ազգային ծրագիրը և պատասխանատու է նախագծերի ընտրության համար: ԱՂԿ անդամները կարող են նաև ներգրավվել մինչընտրական, ինչպես նաև նախագծերի մոնիթորինգի և գնահատման փուլերում: ԱՂԿ աշխատանքային կարգը և տեխնիկական առաջադրանքը տեղադրված են ՓԴԾ հայաստանյան ծրագրի վեբ կայքում (www.sgp.am):

ԳԷՀ/ՓԴԾ-ի Կենտրոնական ծրագրի կառավարման թիմը (ԿԾԿԹ), նստավայրը Նյու Յորք, պատասխանատու է գլոբալ ծրագրի կառավարման և Երկրի ծրագրերին աջակցություն ցուցաբերելու համար: ԿԾԿԹ-ն կենտրոնանում է ռազմավարական և աշխատանքային ուղղորդման աշխատանքների, երկրների ընթացիկ ծրագրերի համակարգման և աջակցման, ինչպես նաև Ծրագրի համայնքային փորձից քաղված դասերի արձանագրման և տարածման վրա:

ՄԱԿ-ի ծրագրերի ծառայությունների գրասենյակը (UNOPS - նստավայրը Նյու Յորք), տրամադրում է ընդհանուր վարչական և ֆինանսական ծառայություններ ծրագրի իրագործման համար:

ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը ՓԴԾ-ի աշխատանքներին տրամադրում է ընդհանուր ծրագրային և կառավարման աջակցություն: Գրասենյակի բնապահպանության պատասխանատուն ԱՂԿ անդամ է: ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակն աջակցում է ծրագրային գործողություններին, նպաստում է կառավարության հետ շփումներին և ԳԷՀ/ՓԴԾ-ին օգնում է կապեր հաստատելու երկրի ֆինանսական և վարչական այլ օղակների հետ: ՄԱԶԾ-ի Մշտական Ներկայացուցիչը UNOPS-ի անունից ստորագրում է Փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) ՀԿ/Համայնքային կազմակերպությունների դրամաշնորհառուների հետ: